Երաժշտության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից. I ունկնդրման մաս , II փակ և բաց առաջադրանքներ, որոնք ներկայացված են առանց ունկնդրման նյութերի:

Ունկնդրման մասի համար հատկացված է սահմանված ժամանակ: Թեստի էլեկտրոնային բուկլետում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան հրահանգում նշված է առաջադրանքը կատարելու համար հատկացված կոնկրետ ժամանակը:

Մնացած ժամանակը ըստ Ձեր հայեցողության բաժանեք թեստի II մասի առաջադրանքները կատարելու համար:

Թեստի առավելագույն միավորն է՝ 70:

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն :

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք կիրառել ստեղնաշարի կոճակները:

I մաս՝ ունկնդրում

Ունկնդրման մասը միավորում է տասը առաջադրանք:

Առաջադրանքներ 1-6:

<u>Հրահանգ:</u> Լսեք երաժշտական հատվածները և պատասխանեք համապատասխան հարցերին: Յուրաքանչյուր առաջադրանքի համար հատկացվում է մեկ երաժշտական հատված և երկու հարց: Յուրաքանչյուր հարցին կից տրվում է չորս ենթադրական պատասխան: Ընտրեք և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք մեկ ճիշտ պատասխանը:

Յուրաքանչյուր երաժշտական հատվածը լսում եք երկու անգամ: Առաջին և երկրորդ ունկնդրումների միջև դադարը կազմում է 20 վայրկյան:

Նախքան յուրաքանչյուր առաջադրանքի համար հատկացված երաժշտական հատվածի ունկնդրումը տրվում է 10 վայրկյան, առաջադրանքի հարցերը ընթերցելու համար:

(Առաջադրանքները տրված են հաջորդ էջից:)

Առաջադրանք 1.

Նախքան առաջին երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (1.1 և 1.2).

1.1 Ո՞ր տարածաշրջանի երգ է:

ա) Սվանեթի

բ) Կախեթի

գ) Գուրիա

դ) Սամեգրելո

1.2 Ի՞նչ ժանրի երգ է:

ա) Քնարական

բ) Էպիկական

գ) Աշխատանքային

դ) Բուժիչ

Առաջադրանք 2.

Նախքան երկրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (2.1 և 2.2).

2.1 Ո՞ր ժանրի ստեղծագործություն է հեղինակը:

ա) Սիմֆոնիա

բ) Կվարտետ

գ) Սիմֆոնիկ ուվերտյուրա

դ) Կոնցերտ

2.2 Ո՞վ է երաժշտության

ա) Օթար Թաքթաքիշվիլի

բ) Սուլխան Ցինցաձե

գ) Ալեքսի Մաճավարիանի

դ) Անդրիա Բալանչիվաձե

Առաջադրանք 3.

Նախքան երրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (3.1 և 3.2).

3.1 Ո՞վ է երաժշտության հեղինակը:

ա) Ջուզեպպե Վերդի

բ) Ջակոմո Պուչինի

գ) Պիետրո Մասկանի

դ) Ջոակինո Ռոսսինի

3.2 Ո՞ր ձայնի տեսակն է կատարում մենակատարի դերերգը:

ա) Բարիտոն

բ) Բասս

գ) Տենոր

դ) Կոնտրտենոր

Առաջադրանք 4.

Նախքան չորրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (4.1 և 4.2).

4.1 Ո՞ր կոմպոզիտորի ստեղծագործությունն է:

ա) Ֆերենց Լիստ

բ) Հեկտոր Բեռլիոզ

գ) Պյոտր Չայկովսկի

դ) Յոհանես Բրամս

4.2 Ո՞ր պարն է կիրառված հատվածում:

ա) Պոլկա

բ) Մազուրկա

գ) Վալս

դ) Չարդաշ

Առաջադրանք 5.

Նախքան հինգերորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (5.1 և 5.2).

5.1 Ո՞ր օպերայից է հնչում հատվածը:

ա) «Ֆիգարոյի հարսանիքը»

բ) «Սևիլյան սափրիչը»

գ) «Ռիգոլետտո»

դ) «Օրփեոսն ու Էվրիդիկեն»

5.2 Ո՞ր գործիքն է մենակատարում:

ա) Հոբոյ

բ) Ֆագոտ

գ) Կլառնետ

դ) Սրնգափող (Ֆլեյտա)

Առաջադրանք 6.

Նախքան վեցերորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (6.1 և 6.2).

6.1 Ո՞ր դարաշրջանի երաժշտությունն է հնչում :

ա) Միջնադար

բ) XX դար

գ) Վերածնունդ

դ) Բարոկկո

6.2 Ո՞ր կատարողական կազմն է կատարում հատվածը:

ա) Կամերա-գործիքային անսամբլ

բ) Փողային նվագախումբ

գ) Սիմֆոնիկ նվագախումբ

դ) Կամերային նվագախումբ

Առաջադրանք 7:

Հրահանգ:Լսեք երաժշտական հատվածը, նոտային գրառման մեջ տրված չորս տարբերակից ընտրեք ունկնդրած լադի համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք ճիշտ պատասխանը: Լադը լսեք երկու անգամ: Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան, նոտային գրառումը վերանայելու համար:



Առաջադրանք 8.

<u>Հրանանգ:</u> Լսեք երաժշտական հատվածը, նոտային գրառման մեջ տրված չորս տարբերակից ընտրեք ունկնդրած ռիթմիկ ֆիգուրացիայի համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք ճիշտ պատասխանը:

Ռիթմիկ ֆիգուրացիան լսեք երկու անգամ:

Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան, նոտային գրառումը վերանայելու համար:



Առաջադրանք 9:

Երաժշտական թելադրություն:

Հրահանգ: Լսեք մեղեդին և գրառեք նոտային համակարգի վրա: Միղեդին մենաձայնային է, ութ տակտանոց և տրված է մեկ տոնայնության մեջ: Այն լսելու և գրելու համար տրվում է 15 րոպե: Մեղեդին լսում եք ձայնագրությամբ չորս անգամ, ամեն հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե:

Ձեր կողմից գրառված մեղեդին տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա տրված նոտային համակարգի վրա:

Առաջադրանք 10:

Երաժշտական ստեղծագործության վերլուծություն

Հրահանգ: Առաջադրանքը նախատեսում է երաժշտական ստեղծագործության վերլուծություն ըստ տրված հարցերի, ձայնային և նոտային գրառումների հիման վրա: Երաժշտական ստեղծագործության ձայնագրությունը լսում եք երեք անգամ, յուրաքանչյուր հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե: Նախքան ունկնդրելը տրվում է 30 վայրկյան, առաջադրանքի հարցերը վերանայելու համար:

(Հարցերը տրված են հաջորդ երկու էջի վրա)

1. Ո՞ր երաժշտական ժանրին է պատկանում տրված հատվածը: Հիմնավորեք Ձեր կարծիքը: Անվանեք արևմտաեվրոպացի կոմպոզիտոր, ով ստեղծել է այս ժանրի դասական նմուշը:

2. Որոշեք ունկնդրած հատվածի.

ա) երաժշտական ձևը ,

բ) սկզբնական տոնայնությունը,

գ) 7-8-րդ տակտում տրված կադանսի մեջ մտնող ակորդների հարմոնիկ (ներդաշնակ) ֆունկցիաները:

3. Բնութագրեք, թե ինչպես է զարգանում երաժշտական հատվածի գեղարվեստա-հուզական կողմը, վերլուծեք և հակիրճ կերպով նկարագրեք, երաժշտական արտահայտչականության ո՞ր միջոցներն են (ի՞նչ տեսակի մեղեդի, ռիթմ, տեմպ, տեմբր (հնչերանգ), հարմոնիա (ներդաշնակություն), լադատոնայնություն, ֆակտուրա և այլն) առանձնապես կարևոր ունկնդրած հատվածի գեղարվեստական բովանդակությունը ստեղծելու համար:

4. Ունկնդրած հատվածի երաժշտաոճական հատկանիշների հիման վրա, որոշեք ստեղծագործության ստեղծման դարաշրջանը և կոմպոզիտորի ինքնությունը:

5. Հակիրճ բնութագրեք ունկնդրած ստեղծագործության հեղինակի մյուս հիմնական ստեղծագործությունները և որոշեք այս ժանրի նշանակությունը նրա ստեղծագործություններում, քննարկեք ունկնդրած ստեղծագործության երաժշտագեղարվեստական համատեքստի յուրահատկությունը:

(Երաժշտական հատվածի նոտային գրառումը տրված է հաջորդ էջերում)


Lento
Violin I
Violin II
Viola
Violoncello
sf espress. cantabile
mf
mf
mf
p
p
p
p


12
13
14
15
16
cresc.
f
dim.
3
p
Piu mosso
mf


f
f
mf
f
mf
f
mp
poco a poco dim.
pizz.
mp
poco a poco dim.
p
pizz.
mp
poco a poco dim.
p
pizz.
mp
p


Allegro molto vivace
pp
pp
pp
1.
2.
ff
ff
ff
f
ff


poco dim.
poco dim.
8va
p
p
p
p
pp
pp
pp
pp
pizz.
pizz.
pizz.


Allegro maestoso
ff
arco
p
cresc.
sf


p


p
pizz.
pizz.
pizz.

II մաս

Առաջադրանքներ 11-26.

Հրահանգ: Պատասխանների թերթիկի վրա ճիշտ պատասխանի համապատասխան վանդակում նշեք X նշանը:

Առաջադրանք 11.

Ո՞ր դարաշրջանում է ստեղծվել մեսսան, որպես եկեղեցական երաժշտության ժանր:

ա) Բարոկկո

բ) Միջնադար

գ) Վերածնունդ

դ) XIX դար

Առաջադրանք 12.

Ո՞ր երաժշտական ցիկլի կամ ժողովածուի մեջ է ընդգրկված «Գոլլիվոգի քեյքվոքը»:

ա) Ռոբերտ Շումանի «Պատանեկան ալբոմ»

բ) Կլոդ Դեբյուսիի «Մանկական անկյուն»

գ) Պյոտր Չայկովսկիի «Մանկական ալբոմ»

դ) Յոհան Սեբաստիան Բախի «Աննա Մագդալենայի նոտայի տետրը»

Առաջադրանք 13.

Ո՞ր կոմպոզիտորի անվան հետ է կապված Յոհան Սեբաստիան Բախի ստեղծագործության վերածնունդը XIX դարում:

ա) Կարլ Վեբեր

բ) Ռոբերտ Շուման

գ) Ֆելիքս Մենդելսոն

դ) Ռիխարդ Վագներ

Առաջադրանք 14.

Ո՞ր կոմպոզիտորի երաժշտությունն է ընկած Վրաստանի պետական հիմնի հիմքում:

ա) Անդրիա Բալանչիվաձեի

ծ) Դիմիտրի Արաղիշվիլի

գ) Օթար Թաքթաքիշվիլիի

զ) Զաքարիա Փալիաշվիլիի

Առաջադրանք 15.

Ո՞վ է համարվում սոնատասիմֆոնիկ ցիկլի հիմնադիրը:

ա) Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտը

բ) Լյուդվիգ վան Բեթհովենը

գ) Ֆրանց Շուբերտը

դ) Յոզեֆ Հայդնը

Առաջադրանք 16.

Ի՞նչն է բնորոշ ռոնդոյի ձևին:

ա) Երաժշտական թեմայի ձևափոխված կրկնողությունը

ծ) էքսպոզիցիոն (ցուցադրման) մասում երաժշտական թեման տարբեր ձայներով հաջորդաբար անցկացումը

գ) Գլխավոր և օժանդակ երաժշտական թեմաների կոնտրաստային հակադրությունը

զ) Մի երաժշտական թեմայի մի քանի անգամ կրկնությունը մյուս թեմաների հնչեցման միջև

Առաջադրանք 17.

Տվյալ ժանրերից ո՞րը *<u>տիպիկ չէ</u>* կլասիցիզմին:

ա) Լարային քառյակ

բ) Սիմֆոնիա

գ) Սյուիտ

դ) Կոնցերտ

Առաջադրանք 18.

Ո՞ր երաժշտական գործիքներն են մտնում դասական սիմֆոնիկ նվագախմբի մետաղյա փողային գործիքների խմբի մեջ:

ա) Սրնգափող (ֆլեյտա), տուբա, գալարափող, կլառնետ

բ) Գալարափող, տուբա, շեփոր, ֆագոտ

գ) Տրամբոն, տուբա, շեփոր , գալարափող

դ) Տրոմբոն, գալարափող, հոբոյ, շեփոր

Առաջադրանք 19.

Թվարկած կոմպոզիտորներից որը *չի գրել* օպերա:

ա) Բեթհովենը

բ) Վագները

գ) Բրամսը

դ) Վեբերը

Առաջադրանք 20.

Ինչպե՞ս է կոչվում օպերային վոկալ տարատեսակը, որը մոտ է բնական խոսքին:

ա) Արիա

բ) Բալլադա

գ) Ռեչիտատիվ

դ) Արիոզո

Առաջադրանք 21.

Ո՞ր կոմպոզիտորն է դրել վրացական բանագիտության հիմքը:

ա) Զաքարիա Փալիաշվիլին

բ) Ալեքսի Մաճավարիանին

գ) Դիմիտրի Արաղիշվիլին

դ) Լադո Աղնիաշվիլին

Առաջադրանք 22.

Ո՞ր ժանրն է պատկանում գործիքային երաժշտությանը:

ա) Մոտետը

բ) Ռիչերկարը

գ) Մադրիգալը

դ) Հիմնը

Առաջադրանք 23.

Ո՞ր երաժիշտն է գլխավորել վրացական դաշնամուրային դպրոցը:

ա) Մելիտոն Բալանչիվաձեն

բ) Խարլամպ Սավանելին

գ) Ալոիզ Միզանդարին

դ) Օթար Թաքթաքիշվիլին

Առաջադրանք 24.

Ո՞ր ռուս կոմպոզիտորն է օգտագործել վրացական օրորոցային երգ՝ «Իավնանայի» մեղեդին իր բալետի համար։

ա) Իգոր Ստրավինսկին

բ) Պյոտր Չայկովսկին

գ) Սերգեյ Պրոկոֆևը

դ) Դիմիտրի Շոստակովիչը

Առաջադրանք 25.

Ո՞ր օպերայի կերպարն է Ամներիսը:

ա) «Դոն Ջովաննի»

բ) «Սևիլյան սափրիչը»

գ) «Բոհեմ»

դ) «Աիդա»

Առաջադրանք 26.

Ո՞ր խմբի նվագարանների վարպետն էր Ստրադիվարիուսը:

ա) Փողային

բ) Լարային

գ) Հարվածային

դ) Ստեղնաշարային

Առաջադրանքներ 27- 30.

Կառուցում նոտայից

Հրահանգ: Կառուցեք սոլ նոտայից տրված ինտերվալը, եռահնչյուն և քառահնչյուն ակորդները, լադը և գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված նոտային համակարգի վրա:

27. Մաքուր կվարտա

28. Մինորային սեքստակորդ

29. Փոքրացած սեպտակորդ

30. Հարմոնիկ մաժոր

Առաջադրանքներ 31-33.

Համապատասխանության որոշում

Հրահանգ: Առաջադրանքում տրված է երկու սյունակ: Որոշեք համապատասխանությունը դրանց միջև: Ձախ սյունակի յուրաքանչյուր տվյալին (1, 2, 3) համապատասխանում է աջ սյունակի միայն մեկ տվյալ (ա, բ, գ, դ, ե): Յուրաքանչյուր համապատասխանությունը պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում նշեք X նշանով:

Առաջադրանք 31.

Որոշեք համապատասխանությունը դաշնամուրային ստեղծագործությունների և երաժշտական ժանրերի միջև, որոնց դրանք պատկանում են .

1) Լյուդվիգ Վան Բեթհովենի «Ապասիոնատ»
2) Կ.Դեբյուսիի «Վուշի գույնի մազերով աղջիկը»
3) Ռ.Շումանի «Կառնավալը»

ա) Սյուիտ
բ) Պրելյուդիա
գ) Էտյուդ
դ) Սոնատ
ե) Ռապսոդիա

Առաջադրանք 32.

Որոշեք համապատասխանությունը օպերայի գործող անձանց և օպերաների միջև.

1) Հերցոգ
2) Ֆիգարո
3) Պապագենո

ա) «Կախարդական ֆլեյտա»
բ) «Գյուղական պատիվ»
գ) «Սևիլյան սափրիչը»
դ) «Տուրանդոտ»
ե) «Ռիգոլետտո»

Առաջադրանք 33.

Որոշեք համապատասխանությունը երաժշտական դարաշրջանների և կոմպոզիտորների միջև.

1) Վերածնունդ
2) XX դար
3) Բարոկկո

ա) Յոզեֆ Հայդն
բ) Ֆրիդերիկ Շոպեն
գ) Յանիս Քսենակիս
դ) Ջովաննի Պիեռլուիջի Պալեստրինա
ե) Անտոնիո Վիվալդի

Առաջադրանքներ 34-38.

«Ճշմարիտ է-Սխալ է»

<u>Հրահանգ:</u> Որոշեք տրված դրույթը ճշմարիտ է թե սխալ, եթե համարում եք, որ դրույթը ճշմարիտ է, ապա նշեք X նշանը համապատասխան վանդակում, նման դեպքում մեկնաբանություն անել չի պահանջվում, իսկ եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա համապատասխան վանդակում դրեք X նշանը և հատկացված տեղում գրեք ճիշտ բացատրությունը:

Սխալ դրույթի դեպքում, տրված բացատրությանը համապատասխանեցրեք ճիշտ տերմին/բառ կամ տրված տերմինի/բառի համար գրեք ճիշտ բացատրություն:

<u>Հաշվի առեք,</u> որ չի ընդունվի այն պատասխանը, ուր տրված բացատրության դրական ձևը կփոխվի բացասականի կամ ընդհակառակը:

Առաջադրանք 34.

«Քարթվելո, խելի խմալս իկար» («Վրացի, թուրդ ձեռքդ առ»), «Լիլե» և «Խերտլիս նադուրի» վրացական ժողովրդական երգերը Արևելյան Վրաստանի ժողովրդական բանահյուսության (ֆոլկլոր) նմուշներ են համարվում:

Առաջադրանք 35.

Վրացական ժողովրդական երգ «Ալի փաշային» բնորոշ է բուրդոնական տիպի բազմաձայնությունը:

Առաջադրանք 36.

Երաժշտա-թատերական ժանր՝ «Մյուզիքլը» ստեղծվել է Ֆրանսիայում :

Առաջադրանք 37.

Յոհան Սեբաստիան Բախը գերմանական օպերայի հիմնադիրն է:

Առաջադրանք 38.

Մադրիգալը, որպես միաձայն երգի ժանր, ստեղծվել է Իտալիայում, Վերածննդի դարաշրջանում:

Առաջադրանքներ 39-40.

Ժամանակագրության որոշում

<u>Հրահանգ:</u> Ժամանակագրական առումով՝ հնագույնից դեպի նորագույնը դասավորեք թվարկացանկը: Պատասխանների աղյուսակում ժամանակագրական հաջորդականությունը նշված է թվանշաններով՝ 1-ից մինչև 4-ը: Պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում, ընտրված թվանշանի երկայնքով, գրեք ճիշտ պատասխանները այբուբենի համապատասխան տառերով (ա, ծ, գ, զ):

Առաջադրանք 39.

Ժամանակագրական առումով դասավորեք երաժշտական ժանրերը, ըստ նրանց ստեղծման ժամանակաշրջանների.

ա) Սոնատասիմֆոնիկ ցիկլ

բ) Օպերա

գ) Կոնցերտային նախերգանք

դ) Մեսսա

Առաջադրանք 40.

Ժամանակագրական առումով դասավորեք երաժշտական դարաշրջաններն ու ուղղությունները.

ա) Միջնադար

բ) Մինիմալիզմ

գ) Վերածնունդ

դ) Ռոմանտիզմ